ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 10 >> 04 2013թ. N: 85-Ա **ք.Գյումրի**

ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԳՅՈՒՄՐԻ ՔԱՂԱՔՈՒՄ 2000 ԹՎԱԿԱՆԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՏՐԴԱՏ ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՓՈՂՈՑԻ 5/5 ՇԵՆՔԻ ԹԻՎ 11 ԲՆԱԿԱՐԱՆՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՄԲ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՀԱՄԱՏԵՂ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՆՊԱՏԱԿՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Տրդատ Ճարտարապետ 5/5 շենքի՝ որպես պետական սեփականություն անշարժ գույքի սեփականության իրավունքի պետական գրանցման 2004 թվականի հունիսի 30-ի թիվ 455389 վկայականը, Գյումրի քաղաքում Ամերիկյան Կարմիր Խաչի միջոցներով կառուցված բնակելի շենքերի բնակարանները վիճակահանությամբ բաշխման գործընթացի վերաբերյալ մարզային հանձնաժողովի 2000 թվականի սեպտեմբերի 6-ի արձանագրությունը և Գյումրու քաղաքապետարանի կողմից 2001 թվականի ապրիլի 6-ին տրված «բնակվելու թույլտվությունը», ղեկավարվելով «Պետական բնակարանային ֆոնդի բնակարանների անհատույց մասնավորեցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ, 5-րդ հոդվածներով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 21-ի «Աղետի գոտու վերականգնման համալիր ծրագրի իրականացման շրջանակներում պետական աջակցության միջոցով կառուցված պետական բնակարանային ֆոնդի բաշխման և 1999 թվականի հունիսի 10-ի թիվ 432 որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» թիվ 1935-Ն որոշման 1-ին կետի «բ» ենթակետի դրույթներով՝

Աղետի գոտու վերականգնման ծրագրի իրականացման շրջանակներում Ամերիկյան Կարմիր խաչի միջոցներով կառուցված Տրդատ Ճարտարապետ փողոցի 5/5 շենքի թիվ 11, երկու սենյականոց բնակարանն անհատույց համատեղ սեփականության իրավունքով տրամադրելու նպատակով պետական աջակցություն ցուցաբերելու վերաբերյալ պայմանագիր կնքել ներքոհիշյալ քաղաքացիների հետ.

Մկրտչյան Օֆիկ Պողոսի,
Մարտիրոսյան Արմեն Արամայիսի,
Մարտիրոսյան Արսեն Արամայիսի,
Մարտիրոսյան Գեղամ Արամայիսի,
Գրիգորյան Նարինե Սամվելի,
Մարտիրոսյան Մանուշակ Գեղամի,
Մարտիրոսյան Արամ Գեղամի,
Մարտիրոսյան Լիանա Գեղամի,
Սարգսյան Նաիրա Սերյոժայի:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ՝ ճիշտ է